



- **[ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒԹՅՆԵՐ](#)**
- **[ԳԼՈՒԽ 2. ԱՐՀԵՍԱՏԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ](#)**
- **[ԳԼՈՒԽ 3. ԱՐՀԵՍԱՏԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՂԱՐՈՒՄԸ](#)**
- **[ԳԼՈՒԽ 4. ԱՐՀԵՍԱՏԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՈՒՔՍԵՆՏՆԵՐԸ, ՆՐԱՎ ԵՎ ԻՐԱՎՈՒՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ](#)**
- **[ԳԼՈՒԽ 5. ԱՐՀԵՍԱՏԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ](#)**
- **[ԳԼՈՒԽ 6. ԱՆՑՈՒՄԱՑԻՆ ԵՎ ԵՅՐԱՓՈՒՅԻՉ ԳՐՈՒԹՅՆԵՐ](#)**

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒԹՅՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի կարգավորմ անտարկան

Սույն օրենքը կարգավորում է նախնական մասնագիտական (արհեստագործական) (այսուհետ՝ արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպական-իրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Հոդված 2. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մասին օրենսդրությունը

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառը կարգավորում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Կրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

արհեստագործական կրթություն՝ առկա ընդհանուր կրթության հիմքի վրա արհեստագործական կրթական ծրագրերի իրականացում, բացառությամբ վարպետային ուսուցման.

միջինմասնագիտական կրթություն՝ առկա ընդհանուր կրթության հիմքի վրա միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացում.

մասնագիտական ուսուցում՝ մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների յուրացմանն ու օգտագործմանը նպատակաուղղված ուսուցման գործընթաց. լրացուցիչ մասնագիտական կրթություն՝ հիմնական մասնագիտական կրթական ծրագրերից դուրս անձի մասնագիտական որակները կատարելագործող, մասնագիտական վերադասակարգումը ապահովող, որակավորումը բարձրացնող և լրացնող ուսումնական գործընթաց.

ուսանող՝ համապատասխան ուսումնական հաստատությունում սահմանված կարգով ընդունված և արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական հիմնական ծրագրով ուսումնառող անձ.

ունկնդիր՝ սահմանված կարգով արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական լրացուցիչ ծրագրով ուսումնառող և (կամ) որակավորման բարձրացման (վերապատրաստման, վերադասակարգման) դասընթացին մասնակցող անձ.

դասախոս՝ ուսանողի (ունկնդրի) տեսական գիտելիքների յուրացումն ապահովող և գործնական կարողությունների զարգացմանը նպաստող, մասնագիտական կրթության և (կամ) ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող.

արտադրական ուսուցման վարպետ՝ անձի արհեստագործական հմտությունները ապահովող, արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և (կամ) մասնագիտական ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող.

մասնագետ՝ միջին մասնագիտական կրթության որակավորման աստիճան, որը շնորհավում է միջին մասնագիտական կրթական ծրագրերին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց.

արհեստավոր՝ արհեստագործական կրթության որակավորման աստիճան, որը շնորհավում է արհեստագործական կրթական ծրագրին և (կամ) որակավորման կարգին համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձանց.

արհեստագործական ուսումնարան՝ արհեստագործական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություն.

քոլեջ՝ միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություն.

ուսումնառություն՝ մասնագիտական կրթական չափորոշիչով սահմանված ուսումնառության նվազագույն տեւողություն.

կրեդիտ (չափանիշ)¹՝ ուսումնական բեռնվածություն և գիտելիքների յուրացման չափաքանակ.

կրեդիտային (չափանիշային) համակարգ՝ ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների կրեդիտների միջոցով չափման, հաշվառման և փոխանցման համակարգ, որ ներառում է դասավանդումը, գործնական և անհատական պարապմունքները, խորհրդատվությունները, ունֆերատների, այլ աշխատանքների պատրաստումը, ամփոփիչ ատեստավորումներին նախապատրաստումը, գնահատումը և այլն.

հեռավար (գիտականցիտ) ուսուցում՝ համակարգված ուսուցման ձև, երբ անմիջական և ոչ անմիջական կապով միջոցառումներով անցված ուսումնական գործընթացը ուսանողի կամ ունկնդրի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով.

դոսիկոթյուն (էքստեռնատ)՝ ինքնակրթությամբ և արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունում գիտելիքների ու կարողությունների ընթացիկ, ամփոփիչ գնահատման եղանակով իրականացվող կրթության ձև.

ուսանողական նպաստ՝ ուսանողի ուսման վարձի փոխհատուցում պետական բյուջեի ֆինանսավորման, մասնագիտական ուսումնական հաստատության, այլ իրավաբանական և ֆիզիկական անձան հատկացումների հաշվին.

որակյիջահատում (ատեստավորում)՝ արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության մասնագիտությունների, կրթական ծրագրերի, ուսուցման մեթոդների, անձնակազմի և կառուցվածքի արդյունավետության գնահատում.

սոցիալական գործընկեր՝ արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգին աջակցող, համագործակցող և համակարգի զարգացման գործում շահագրգիռ կազմակերպություն կամ կազմակերպությունների միավորում, ներառյալ՝ ցանկացած տիպի ուսումնական հաստատություն:

Հոդված 4. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության կրթությունները և քաղաքացիների իրավունքների պետական երաշխիքները

1. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝
 - 1) քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մասնագիտական կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը.
 - 2) ժամանակակից անձի ու քաղաքացու ձեւավորման, հասարակության մտավոր ներուժի և աշխատուժի վերադասակարգման և զարգացման, աշխատանքային շուկայում մրցունակության և սոցիալական գործընկերության ապահովումը.
 - 3) ուսանողի և ունկնդրի մասնագիտական գիտելիքների և հմտությունների համապատասխանության ապահովումը տնտեսության ու աշխատանքային շուկայի պահանջներին.
 - 4) կրթական գործընթացի անընդհատությունը, հաջորդայնությունը և շարունակականությունը.
 - 5) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի կառավարման թափանցիկությունն ու կողգիպությունը.
 - 6) մրցութայնությունը և հրապարակայնությունը.
 - 7) արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող սուբյեկտների իրավահավասարությունը.
 - 8) արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ինքնավարությունը և վերահսկելիությունը.
 - 9) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության մատչելիությունը .
 - 10) սոցիալական գործընկերների հետ համագործակցությունը.
 - 11) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակավորումների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին.
 - 12) Հայազգի օտարերկրյա քաղաքացիների (սփյուռքի համար) արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում ստանալու ապահովումը:
2. Պետությունը, հաշվառնալով Հայաստանի Հանրապետության աշխատուժի շուկայի կազմը և կառուցվածքը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար արհեստագործական և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններում է՝
- 1) մրցութային կարգով արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն պետական բյուջեի միջոցների հաշվին.
 - 2) սոցիալական գործընկերների պատվերով և ֆինանսավորումամբ արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և մասնագիտական ուսուցում.
 - 3) պետական ծրագրերի շրջանակներում մասնագիտական ուսուցում՝ համապատասխան բյուջետային հատկացումների հաշվին:
- Պետությունն աջակցում է նախնական մասնագիտական արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններն ուսանողների, ունկնդրների ուսումնադասարանական, տեխնոլոգիական, նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպմանը:
3. Ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձեւով տրվում է մրցույթի արդյունքներով արհեստագործական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարադրույններով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին և կարգին համապատասխան:

Հոդված 5. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության կրթությունները

1. Հայաստանի Հանրապետությունում արհեստագործական և միջին մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության խնդիրներն են՝
- 1) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի ներդրումը.
- 2) առաջնային և կարճերոք բնագավառների համար մասնագետների պատրաստմանը և վերապատրաստմանը աջակցելը.
- 3) կրթական գործընթացի անընդհատությունը, շարունակականությունը, թափանցիկությունը և հրապարակայնությունը ապահովումը.
- 4) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի զարգացումը և մրցունակության բարձրացումը.
- 5) ուսանողի՝ ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը:
2. Պետությունն ապահովում է արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացում հետևյալ ձեւերով.
- 1) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի կատարելագործում և արդիականացում.
- 2) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման պետական ծրագրերի մշակում և իրականացում.
- 3) արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերի համապատասխանեցում աշխատանքային շուկայի պահանջներին.
- 4) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ֆինանսավորում՝ պետության պահանջներից ձեւերով.
- 5) սահմանված կարգով արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ուսանողներին և ունկնդիրներին ֆինանսական օժանդակություն (կրթաֆինանսավորում, ուսանողական նպաստներ, ուսման վարձի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի (զեղչ), կրթական դրամաշնորհներ, վարկեր).
- 6) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգում գիտելիքների ատեստման, ուսուցման կազմակերպման նոր ձեւերի, ներառյալ՝ կրեդիտային համակարգի ներդրում.
- 7) կրթական նոր հայեցակարգերի և տեխնոլոգիաների ներդրում:

ԳԼՈՒԽ 2
ԱՐՀԵՍԱՏԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 6. Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգը

Արհեստագործական և միջին մասնագիտական կրթության համակարգը ներառում է՝

- 1) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, պետական հավատարմագրման չափանիշները.
- 2) հիմնական և լրացուցիչ արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն և ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունները և համապատասխան այլ կազմակերպություններ.
- 3) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության պետական կառավարման լիազորված մարմինները (այսուհետ՝ լիազոր մարմիններ).
- 4) արհեստագործական և միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի սոցիալական գործընկերները:

- հավանություն է տալիս արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության ե ուսուցման ուզամվարությանը.
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված կարգով ստեղծում ,վերակազմակերպում ե լուծարում է արհեստագործական ե միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները.
- հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը.
- հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների ձեւավորման ե հաստատման կարգը.
- հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման հիմքի, ձեւի ե տեղորոշյան, ինչպես նաեւ այն մասնագիտությունների ցանկը, որով արգելվում է հետակա, հեռավար, դրսևնական կարգով ուսուցումը.
- հաստատում է ըստ մասնագիտական կրթության մասնագիտությունների տրվող որակավորումների ցանկերը.
- հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ե արհեստագործական ե միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների պետական հավատարմագրման կարգը, չափանիշները ե տեղորոշյունը.
- հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ե արհեստագործական ե միջին մասնագիտական կրթություն ե ուսուցում իրականացնող կազմակերպությունների, դրանցում ուսուցանվող կրթական ծրագրերի լիցենզավորման կարգը.
- հաստատում է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում ե բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների (ներառյալ՝ ուսումնառությունը չավարտած անձանց) միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում կրթությունը շարունակելու կարգը.
- հաստատում է ֆինանսական միջոցների տրամադրման կարգը, ներառյալ՝ ուսման վարձը փոխհատուցելու, կրթաթոշակ սահմանելու, ուսանողական նպաստ ե ուսումնական վարկ հատկացնելու կրթական հիմնադրամների ֆինանսավորելու կարգերը.
- հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության իրականացման առկա, հեռակա, հեռավար (դիտանցիոն), դրսևկության (էքստերնատի) ե անհատական մասնագիտական ուսուցման (վարպետային ուսուցման) ձեւերով ուսուցման մասնագիտությունների ցանկերը ե կարգերը.
- ապահովում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության գարգացումը.
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

Հոդված 16. Արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության բնագավառում կրթության պետական կառավարմանլիազորված մարմին իրավասությունները

- Արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության ե ուսուցման բնագավառում կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝
- մշակում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության ե ուսուցման ուզամվարությունը.
- հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները.
- հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների մասնագիտացումների ցանկերը.
- իր իրավասությունների շրջանակում մշակում ե հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության ե ուսուցման համակարգի գործունեությունը կանոնակարգող այլ իրավական ակտեր.
- հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ընդունելություն կարգը.
- հաստատում է ուսանողների (ունկնդիրների)՝ մեկ մասնագիտական ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը.
- իր իրավասության շրջանակներում իրականացնում է վերահսկողություն արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական կրթական չափորոշիչներ պահանջների կատարման, շրջանավարտների ամփոփիչ առեստավորման ե նրանց պատրաստման որակի նկատմամբ.
- հաստատում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում որակի գնահատման ե (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից կրթության որակի ապահովման գործընթացի իրականացման կարգը.
- իրականացնում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորումը, բացառությամբ բժշկական միջին մասնագիտական կրթական ծրագրերի , մասնագիտական ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրում.
- սահմանում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության փորձական կրթական ծրագրերի իրականացման կարգը.
- հաստատում է մեկից ավելի արհեստագործական ե միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը.
- արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով աշակցում է արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման մարմինների ձեւավորմանը.
- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով ե այլ իրավական ակտերով սահմանված լիազորություններ:

Հոդված 17. Արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության բնագավառում կառավարման այլ մարմիններիիրավասությունները

- կառավարության լիազորած կառավարման այլ մարմինները արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության բնագավառում՝
 - իրենց իրավասության սահմաններում մասնակցում են հետևյալ գործընթացների իրականացմանը.
 - արհեստագործական ե միջին մասնագիտական պետական կրթական չափորոշիչների մշակում, մասնագիտությունների ե մասնագիտացումների ցանկերի, մասնագետների որակավորման պահանջների, ուսանողների գիտելիքների, կարողությունների ու հմտությունների նկատմամբ պահանջների ձեւավորում, մեծահասակների կրթության ե ուսուցման կազմակերպում ,
 - շրջանավարտների պետական ամփոփիչ առեստավորման ե որակավորման աստիճանների շնորհում,
 - բնագավառի աշխատողների որակավորման բարձրացման ե վերաորակորման կազմակերպում.
 - ապահովում են ուսանողների, ունկնդիրների ուսումնաարտադրական, տեխնոլոգիական, նախադիպլոմային պրակտիկաների ե գործնական աշխատանքների իրականացումը.
 - ուսումնասիրում են աշխատանքային շուկայի պահանջարկը ե առաջարկություններ են ներկայացնում կրթության պետական կառավարման լիազորված մարմնին մասնագետների ե նրանց պատրաստման պայմանների վերաբերյալ.
 - հաստատում են իրենց ենթակայության արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները.
 - արհեստագործական ե միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների հիմնական գործատուները կարող են մշակել մասնագիտական կրթություն ե ուսուցում իրականացող կազմակերպությունների հետ համագործակցության հմքերը (մեխանիզմները) ե դրանք առաջարկել համապատասխան լիազոր մարմնին ե կազմակերպությունը:

Հոդված 18. Արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատության լիազորությունները եկառավարումը

- Արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենքներին, սույն օրենքին, այլ իրավական ակտերին ե իր կանոնադրությանը համապատասխան՝
 - ըստ կրթական ծրագրերի ե ուսուցման ձեւերի իրականացնում է ուսանողների ե ունկնդիրների ընդունելությունը, ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ ե պետական ամփոփիչ առեստավորման կազմակերպումն ու անցկացումը՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներով.
 - ապահովում է դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը.
 - իրականացնում է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության գարգացմանը նպաստող ծրագրեր.
 - աշակցում է ուսանողական ինքնակառավարմանը, ուսանողների մասնակցությունը ուսումնական հաստատության կողմից իրականացվող ծրագրերում.
 - իրականացնում է մեծահասակների կրթության ե ուսուցման ծրագրեր:
- Արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազոր պետական մարմինը , հաստատության գործադիր մարմի (տնօրեն) ե ուսումնական հաստատության խորհուրդը (ալտուհետ՝ խորհուրդ):
- Խորհուրդը տվյալ ուսումնական հաստատության կողեղիպ կառավարման մարմինն է, որը ստեղծվում է 5 տարի ժամկետով: Խորհուրդը ձեւավորվում է մանկավարժական կազմից, ուսանողության ներկայացուցիչներից, ինչպես նաեւ հիմնադրի, կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ներկայացուցիչներից: Խորհրդի ձեւավորման կարգը սահմանում է լիազոր մարմինը: Խորհրդի կազմաանակը սահմանվում է տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ, սակայն ոչ ավելի, քան 20 հոգի: Խորհրդի լիազորությունների մեջ մտնում են հաստատության բյուջեի, ուզամվարական ծրագրերի, ուսման վարձի հաստատումը, տնօրենի ընտրությունը, ինչպես նաեւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ լիազորություններ:
- Հիմնադրի որոշմամբ կամ տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ ձեւավորվում են գիտական խորհուրդներ ե կարող են ձեւավորվել խորհրդակցական ե վերահսկողություն իրականացնող մարմիններ:
- Արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատության գործադիր մարմին՝ տնօրենի նշանակման (ընտրության) ե ազատման, ինչպես նաեւ նրա գործունեության կարգը սահմանվում է տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ:
- Պետական արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատության տնօրենի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում է լիազորված մարմնի ղեկավարը:

Հոդված 19. Արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության ե ուսուցման որակի ապահովումը ե դրա նկատմամբպետական վերահսկողությունը

- Արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության ե ուսուցման որակի ապահովման կազմակերպվող իրականացնում է տվյալ ուսումնական հաստատությունը կամ մասնագիտական կրթություն ե ուսուցում իրականացնող կազմակերպությունը:
- Արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության ե ուսուցման որակի նկատմամբ պետական վերահսկողությունը նպատակաուղղված է արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության բնագավառում միասնական պետական քաղաքականության ապահովմանը, մասնագետների պատրաստման որակի բարձրացմանը, արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության ե ուսուցման համակարգի ֆինանսավորման համար հատկացված պետական բյուջեի ե այլ միջոցների արդյունավետ օգտագործմանը:
- Արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության ե ուսուցման որակի նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում են կրթության պետական կառավարման լիազորված մարմինը ,լիազոր մարմինները՝ լիցենզավորման ե հավատարմագրման, ինչպես նաեւ որակի ապահովման գործընթացների կազմակերպմամբ՝ որակի գնահատում ե (կամ) հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների միջոցով:
- Արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության ե ուսուցման համակարգում որակի ապահովման գործընթացների սկզբունքներն են գնահատման օբյեկտիվությունը, անընդհատությունը, թափանցիկությունը, միասնականությունը ե հրապարակայնությունը:

Հոդված 20. Մասնագիտական կրթական գործունեության (կրթական ծրագրերի) լիցենզավորումը ե արհեստագործական եմիջին մասնագիտական ուսումնական հաստատության հավատարմագրում

- Արհեստագործական ե միջին մասնագիտական կրթական գործունեություն (կրթական ծրագրեր) կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:
- Արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթության ե ուսուցման ուսումնական հաստատությունը լիցենզավորում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:
- Արհեստագործական ե միջին մասնագիտական կրթական գործունեության լիցենզավորումն իրականացվում է տվյալ կրթական ծրագրի լուրաքանչյուր մասնագիտության համար առանձին:
- Արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ե կրթական ծրագրերի պետական հավատարմագրումն իրականացվում է լիցենզիայի առկայության դեպքում ըստ ուսումնական հաստատությունների ե դրանց մասնագիտությունների:
- Հայաստանի Հանրապետության արհեստագործական ե միջին մասնագիտական կրթության համակարգում պետական հավատարմագրման են ենթակա արհեստավորի ե մասնագետի կրթական ծրագրերը:
- Արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատությանը պետական հավատարմագրման վկայականը տրվում է տվյալ ուսումնական հաստատության առանձին մասնագիտությունների գծով երկու տարի անընդմեջ շրջանավարտների առվազան 60 տոկոսի առեստավորման դրական արդյունքների եզրակացությունը, ինչպես նաեւ այդ հաստատության մասնագիտությունների առվազան 75 տոկոսի արժեքի պետական հավատարմագրման առկայության դեպքում:
- Պետական հավատարմագրման վկայականը հավաստում է արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատության իրականացրած կրթական ծրագրերի մակարդակի, դրանյ բովանդակության ե շրջանավարտների կրթության որակի համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:
- Ուսումնական հաստատության մասնաճյուղերը հավատարմագրվում են ընդհանուր հիմունքներով՝ մասնաճյուղ ունեցող մասնագիտական ուսումնական հաստատության հայտի հիման վրա:
- Հայաստանի Հանրապետության ե(կամ) օտարերկրյա այլ պետությունների արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, այլ կազմակերպությունների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները ե դրանց մասնաճյուղերն իրավահավասար են պետական արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին ե լիցենզավորվում, հավատարմագրվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:
- Արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատության տված ավարտական փաստաթիթում (դիպլոմում) նշվում է ուսումնական հաստատության, դրա առանձին մասնագիտության հավատարմագրված լինելու փաստը:
- Արհեստագործական ե միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը կարող է ստանալ նաեւ հասարակական հավատարմագրում, որը հասարակական հավատարմագրում իրականացնող կազմակերպությունների կողմից իրենց չափանիշներին ե պահանջներին մասնագիտական ուսումնական հաստատության գործունեության որակական չափանիշների համապատասխանության գանաչումն է:

Հողված 21. Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման համակարգի ուսանողները եւունկնդիրները

- Արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ուսանողն իրավունք ունի՝
 - ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) եւ տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ, որոնք տրամադրում են ուսումնական հաստատությունները.
 - մասնակցելու իր կրթության բովանդակության ձեւավորմանը` պահպանելով մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները.
 - մասնակցելու արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կառավարման համապատասխան մարմինների աշխատանքներին.
 - բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, անցնելու ուսումնական այլ դասընթաց՝ հաստատության սահմանած կարգով.
 - վճարովի ուսուցման համակարգից փոխադրվելու անվճար ուսուցման համակարգ.
 - օգտվելու ուսման տարեկան վարձի մասնակի կամ լրիվ փոխհատուցման իրավունքից (ուսումնական նպաստների ձեւով)` «կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով եւ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով.
 - օգտվելու սահմանված շափի, ներառյալ՝ անվանական, ինչպես նաեւ իրենց ուսման ուղարկած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նշանակած կրթաթոշակներից, նպաստներից եւ վարկերի նվիրատուություններից եւ դրամաշնորհներից.
 - ուսման վճարի փոխհատուցում նպաստի ձեւով տրվում է մրցույթի աղյունքներով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված, ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով ուսանողներին՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով. կառավարության հաստատած տեղերի քանակին եւ կարգի համապատասխան:

Առաջաճեթ եւ կարեւր ոլորտների մասնագիտությունների ցանկը եւ քանակը հաստատում է կառավարությունը, ինչպես նաեւ սահմանված կարգով փոխհատուցում է այդ ուսանողների նպաստը: Ուսանողների պետական կրթաթոշակ է տրվում գերազանց եւ լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսեւորելու համար: Պետական կրթաթոշակի տրման կար եւ չափը սահմանում է կառավարությունը.

- 9)ուսանողները կարող են օգտվել օրենքներով եւ տվյալ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:
 - Առողջակեր պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում ուսանողին կարող է տրամադրվել ակադեմիական արձակուրդ, որի ընթացքում նա պահպանում է ուսանողի իր իրավունքը: Ակադեմիական արձակուրդ տրամադրելու կարգը եւ ժամկետները սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
 - Ուսումնատությունը որեւէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքը կարող է վերականգնվել՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:
 - Ուսանողի տեղափոխությունը պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատություն կարող է իրականացվել մեկ այլ պետական հավատարմագրում ստացած մասնագիտական ուսումնական հաստատությունից:
 - Ունկնդիրները մասնագիտական կրթական ծառայություններ ստանալու մասով օգտվում են ուսանողների իրավունքից:
 - Ուսանողը կամ ունկնդիրը կրում է պարտականություններ «կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ եւ ներքին կանոնակարգերով սահմանված կարգով:

Հողված 22. Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության համակարգի աշխատողները

- Արհեստագործական եւ միջինմասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում նախատեսվում են մանկավարժական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնասօժանդակ եւ այլ անձնակազմի:
- Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների մանկավարժական կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ:
- Մանկնդիրժական աշխատողների տարակարգերին եւ պաշտոններին ներկայացվող պահանջները, մրցույթների կազմակերպման եւ անցկացման, վերապատրաստման եւ ատեստավորման կարգեր հաստատում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:
- Մասնագիտական կրթության համակարգի աշխատողները իրավունք ունեն օգտվելու օրենքներով եւ տվյալ մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

ԳԼՈՒԽ 5

ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հողված 23. Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման համակարգի սեփականությանհրաբերությունները

- Արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված գործունեության ապահովման նպատակով հիմնադիրը (հիմնադիրները) ուսումնական հաստատության սեփականության կամ օգտագործման (անհատույց կամ հատուցելի) իրավունքով տրամադրում է շենքեր, շինություններ, տրանսպորտ, հողամասեր, սարքավորումնե ինչպես նաեւ սպառողական, սոցիալական, մշակութային եւ այլ նշանակության անհրաժեշտ գույք: Պետական արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին հիմնադիրը (հիմնադիրները) գույքը տրամադրում է անժամկետ եւ անհատույց օգտագործման իրավունքով:
- Արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունը սեփականության իրավունք ունի ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից արհեստագործական կամ միջին մասնագիտական ուսումնական հաստատությանը նվիրատվության, հանցանակասության կամ կտակի ձեւով փոխանցված դրամական միջոցների, գույքի եւ սեփականության այլ օբյեկտների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաեւ սեփական գործունեությունից ստացված եկամուտների եւ այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ:

Հողված 24. Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության համակարգի ֆինանսավորումը

- Արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատության ֆինանսավորումն իրականացնում է հիմնադիրը (հիմնադիրները)` օրենքով սահմանված կարգով:
- Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթական համակարգը ըստ կառավարության սահմանած չափի եւ հատկացումների ֆինանսավորվում է պետական բյուջեից եւ օրենքով չարգելվա այլ միջոցներից:
- Ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
 - սեփական միջոցները, որոնք գոյանում են ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ եւ օրենքով չարգելված գործունեության այլ տեսակներից.
 - Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա պետությունների իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, դրամաշնորհներն ու վարկերը.
 - Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեները:
 - Արհեստագործական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները սահմանված կարգով իրականացնում են իրենց տնտեսական եւ ֆինանսական գործունեության հաշվապահակ հաշվառումը:
 - Ֆինանսավորման եւ միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպություններում տնտեսական եւ ֆինանսական գործունեության վերահսկողությունն իրենց լիազորություննեյ սահմանում իրականացնում են լիազորված մարմինները:
 - Արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությունների գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)` կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 6

ԱՆՃՈՒՄԱՑԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

Հողված 25. Անցումային դրույթներ

- Սույն օրենքի 18-րդ հոդվածի երրորդ մասը ուժի մեջ է մտնում 2008 թվականի սեպտեմբերի 1-ից:
- Սույն օրենքի 20-րդ հոդվածի առաջին մասը արհեստագործական կրթական ծրագրերի մասով ուժի մեջ է մտնում 2006 թվականի հունվարի 1-ից:
- Սույն օրենքի 20-րդ հոդվածի չորրորդ մասը արհեստագործական կրթական ծրագրերի մասով ուժի մեջ է մտնում 2006 թվականի հունվարի 1-ից:
- Սույն օրենքի 21-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետն ուժի մեջ է մտնում 2007 թվականի սեպտեմբերի 1-ից:
- Սույն օրենքի 21-րդ հոդվածի չորրորդ մասը ուժի մեջ է մտնում 2009 թվականի սեպտեմբերի 1-ից:
- Մինչեւ 2006 թվականի հունվարի 1-ը միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները վերանվանվում են քոլեջներ:
- Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՔՈԶԱՐՅԱՆ

13.08.2005
ՀՕ-164

ԴեՊե Ան